



ք. Երևան, 15.02.16 թ.

Ելք № 014

«Հ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»

«Հ Քաղաքացիական օրենսգրքի 1026 հոդվածի համաձայն **համարեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համարեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:**

Նույն օրենսգրքի 1029 հոդվածի համաձայն **ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, եթե համարեղ գործունեության պայմանագրով սահմանված չէ, որ գործերը վարում են համարեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակիցներ կամ բոլորը՝ համարեղ:**

Համատեղ գործունեության մասով հարկային կարգավորումները ներկայացված են նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, օրենքի 6.1 հոդվածով սահմանված է, որ **առանց իրավաբանական անձ ձևավորելու համարեղ գործունեության մասով հարկերի (բացառությամբ հարկային գործակալի կողմից պահվող եկամտային հարկի, ոչ ռեզիդենտի շահութահարկի և տեղական հարկերի) հաշվարկման և վճարման պարտավորությունը կատարում է համարեղ գործունեության գործերը վարող անձը:**

Համատեղ գործունեության մասով կարգավորում է առկա նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, օրենքի 26 հոդվածով նշված է հետևյալը. **«հաշվանցման ենթակա չեն... 7)առանց իրավաբանական անձ ձևավորելու համարեղ գործունեության իրականացման համար համարեղ գործունեության մասնակցի կողմից կատարվող ներդրումներին վերաբերող՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց վճարված ԱԱՀ-ի գումարները, բացառությամբ սույն օրենքի 6 հոդվածի 5-րդ կետով սահմանված դեպքի: Սույն կետին համապատասխան հաշվանցման ոչ ենթակա ԱԱՀ-ի այն գումարները, որոնք նախկինում հաշվանցվել են՝ վերաձևակերպվում և նվազեցում են հաշվանցվող գումարներից այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել է ներդրումը:»**

Արդյունքում, վերոնշյալ իրավական ակտերի համատեքստում պարզաբանման ենթակա է մնում, թե ինչպե՞ս են հաշվարկվում շահութահարկի կամ ԱԱՀ-ի գծով ծախսերը գործերը վարողի մոտ, և հնարավո՞ր է արդյոք շահութահարկի գծով հաշվառումը վարվի առանձին՝ յուրաքանչյուր ընկերությունում հաշվի առնելով իր ավանդի դիմաց ստացած շահաբաժինն ու դրա գծով կատարված ծախսերը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1007-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան խնդրում ենք պարզաբանել:

1. Եթե ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն երկու կողմերի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր, ապա հնարավոր է արդյոք կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարգավորել, որ համատեղ գործունեության արդյունքում առաջացող հարկվող եկամտից շահութահարկի և ԱԱՀ-ի հաշվառումն իրականացվի երկու ընկերություններում էլ առանձին-առանձին, յուրաքանչյուր կողմ ինքնուրույն հաշվարկի և վճարի իր ավանդի դիմաց ստացված շահույթից շահաբաժինը, երբ պայմանագրով կողմերից մեկին է վերապահված գործերի կառավարման գործառույթը:

2. Եթե ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն երկու կողմերի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր, և քանի որ նրանցից մեկն է կրում հարկերի հաշվարկման և վճարման պարտականությունը, ապա գործերը վարողի մոտ բացի իր ավանդի գծով ստացված եկամտից և կատարված ծախսերից, համատեղ գործունեությունից մյուս մասնակցի կատարած ծախսերը ինչպես և ինչ ձևով են արտացոլվում:

3. Եթե ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն երկու կողմերի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր, ապա կարող է արդյոք գործերի կառավարիչը մյուս մասնակիցներին մինչև ընթացիկ տարվա ավարտը վճարել ընթացիկ տարվա համատեղ գործունեությունից շահաբաժիններ (համատեղ գործունեությունն ավարտված լինելու պարագայում), երբ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով շահաբաժնի վճարումը նախատեսված է տարեկան մեկ անգամ նախորդ տարիների համար:

4. Եթե ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն երկու կողմերի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր, ապա ինչ ձևակերպում են ստանում պայմանագրի մասնակիցների մոտ տվյալ գործունեության նպատակով կատարված ծախսերի մասով դեբետագրված ավելացված արժեքի հարկի գումարները, որոնք չեն վերաբերում վերջիններիս ներդրումներին, որոնց մասով առկա է կարգավորումը:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան